Ինչ է *Planboard*-ը

Ինչպե՞ս է այն կիրառվում ուսուցման գործընթացում…

Planboard-ը դասերի պլանավորման առցանց գործիք է, որը կարելի է կիրառել ուսումնական գործընթացում ուսումնական գործընթացի առցանց պլանավորման, դասերի պլանների մշակման և խմբագրման համար:

Այն հնարավորություն է ստեղծում դասավանդողների համար թվայնացնելու դասերի պլանավորման և դասապլանների մշակման գործընթացը՝ միաժամանակ ընդլայնելով առկա հնարավորությունները:

Planboard-ը մշակվել է Chalk ընկերության կողմից՝ ստեղծելով անվճար հնարավորություններ դասերի թվային պլանավորման համար: Հարթակը ստեղծված է և աշխատում է վեբ տիրույթում ինչը հնարավորություն է տալիս հեշտությամբ մուտք գործել բազմաթիվ սարքերից՝ դարձնելով այն պլանավորման և դասապլանների մշակման և խմբագրման հիմնական գործիք:

Planboard հարթակի առավելությունները.

- Կարելի է սահմանել դասերի պլանավորման տարբեր ժամանակահատվածներ.

- Օրական
- Շաբաթական
- Ամսական
- Անբողջ ուս. տարվա համար

- Դասերի պլաններից յուրաքանչյուրը կարելի է կառուցել առանձին կաղապարների մեջ
- Դասապլանների մշակման և խմբագրման համար առկա են տարաբնույթ խմբագրիչներ և մեդիագործիքներ (տեսանյութերճ պատկերներ, հղումներ և այլն…):
- Պլանավորումը հեշտությամբ սինխրոնացվում է ներկառուցված օրացույցի հետ՝ ավելի պարզեցնելով ամենօրյա կամ երկարաժամկետ աշխատանքները:
- Հավելվածը ինտեգրվում է Google Classroom-ին:

Վճարովի տարբերակով հարթակն առաջարկում է ավելի լայն հնարավորություններ:

Ինչպե՞ս է աշխատում Planboard-ը.

1. Սկսելու համար նախ անհրաժեշտ է հարթակում ստեղծել անվճար հաշիվ.

- Google-ի զննարկման տիրույթում փնտրել <planboard>
- Մուտք գործել *https://auth.chalk.com/login*
- Ընտրել *Sign up* տարբերակը
- Մուտք գործել Google հաշվով



- https://app.chalk.com/dashboard տիրույթում ստեղծվում է անհատական հաշիվ նոր օգտատերերի համար.



2. Բացվում է պլան-կաղապարների հիմնական միջերեսը, որտեղ Lessons բաժնում ընտրվում է պլանավորման ժամանակահատվածը.(օրինակ. մեկշաբաթյա պլանավորում՝ Մայիսի 15ից 22-ը)



3. Lessons բաժնում Timetable ենթաբաժնից կատարվում է առանձին առարկաների տեղակայում՝ ըստ օրերի և ժամերի.



4. Պլանավորումը կարելի է կատարել նաև կոնկրետ առարկաների համար՝ կոնկրետ ժամանակաքանակով.



5. Այնուհետև կատարվում է դասերի պլան-կաղապարների խմբագրում կոնկրետ ընտրված ժամանակահատվածի համար.



6. Յուրաքանչյուր դասի պլանավորումը կատարվում է կոնկրետ կաղապարի ներսում՝ ակտիվացնելով Edit Content հրամանը.



7. Կաղապարի ներսում դասի պլանավորումը ունի խմբագրական լայն հնարավորություններ.



8. Հնարավոր է մուտքագրել.

- տեքստ տարբեր լեզուներով,
- բանաձևեր,
- գրաֆիկական նշաններ և պատկերներ,
- նկար
- տեսանյութ
- հղում
- URL հղում և այլն

9. Ինչպե՞ս կիսվել Planboard-ով ստեղծված դասերի պլանների ամուշ օրինակներով.

- Ակտիվացվում է ստեղծված դասի պլանի վերին աջ անկյունում գտնվող Share հրամանը.



- Enter Email դաշտում նշվում է ստացող օգտատիրոջ էլ. փոստի հասցեն և Share.



11.